ընտանիքների տարեկան ծախքերը։ Խոշոր գերդաստանների քայքայումից առաջացած մանր ընտանիքները ի վիճակի չէին իրենց փոքր հողաբաժիններ-ի և սակավաթիվ անասունի արդյունքներով բավարարել ընտանիքի կարիք-ները, մանավանդ որ տնտեսությունն ավելի և ավելի անցնում էր դրամական ձևին։ Կողմնակի հասույթ որոնելու համար գավառից հեռացողների թիվը տարեցտարի ավելանում էր։ Ս. Զելինսկին[38] բերում է 1884 թ. Զանգեզուրից[39] հեռացողների թիվը։ Նրա տվյալներից երևում է, որ այդ թվին հեռանալու համար անցագիր էին վերցրել 2.934 մարդ, որոնցից 1.174 մարդ արքունի գյուղերից՝ հայկականներից շորս անգամ ավելի մեծ թվով (ամեն մի գյուղից միջինը՝ 38,5 մարդ), քան թե թրքականներից (միջինը՝ 10 մարդ)։ Ուրիշ տվյալները ցույց են տալիս, որ կալվածատիրական գյուղերից հեռացողների թիվը համեմատաբար ավելի մեծ է եղել, քան թե արքունի գյուղերից հեռա-ցողներինը։ 1897 թ. «Մշակի» թղթակիցը մարտի 10-ին Մեղրուց գրում է, որ օտարության գնալու համար անցագիր վերցնողների և այդ նպատակով գա-վառի կենտրոն Գորիս դիմողների թիվը այնպիսի «ստվար բազմություն է կազմում, որ պաշտոնակատարները չեն կարողանում հասցնել, և անցագիր ստանալը 3—4 օր է քաշում»։ Այդ տիպի պանդխտությունն ամենից ավելի ծավալվում էր Խնձորեսկ գյուղում։ Հեռացողների մեջ կոփվում էր դասակար-գային պայքարի մտայնությունը, սակայն դրա ռեալ անդրադարձումը տեղի էր ունենում պանդխտության վայրերի և ոչ թե իրենց հայրենիքի կյանքի մեջ՝ Զանգեզուրում, որտեղ նրանց չէր միացնում միևնույն գործարանային շրջա-պատը։ Նրանց մեջ հասունացող հեղափոխական տրամադրությունները կազ-մակերպչորեն միացած երևան եկան 1920 թ. մայիսյան շարժումների ժամա-նակ, որոնք ընդգրկեցին մանավանդ Սիսիանի և Գորիսի շրջանները՝ կենտրոն ունենալով Խնձորեսկը և համեմատաբար թույլ ներգրավելով պղնձահանքերի բանվորությանը։

Այն տնտեսական և հասարակական փոփոխությունները, որոնք սենատոր Հանի մշակած օրենքի և այնուհետև նրա մեջ մտցրած սրբագրումների և լրա-ցումների գործադրության հետևանքով, մանավանդ Վորոնցովի փոխարքայու-թյան միջոցին և հաջորդ տասնամյակներում հետզհետե արագանալով և խորա-նալով, տեղի էին ունենում ինչպես ընդհանրապես Անդրկովկասի, նույնպես (թեև մեծ ուշացումով) նաև Զանգեզուրի գյուղացիության մեջ, ոչ պակաս զորությամբ տեղի էին ունենում նաև արտոնյալ շերտի մեջ, այն է՝ ազնվա-կան կալվածատիրության մեջ։ 1861 թ. օրենքով Զանգեզուրի մելիքներն ու բեգերն էլ զրկվեցին վարչական, դատական և այլ պետական բնույթ կրող իրավունքներից և մնացին սոսկ կալվածատերեր։ Մինչև առաջին համաշխար-հային պատերազմը նրանց հողատիրության կողքին գրեթե չէր ստեղծվում այլ տիպի մասնավոր հողատիրություն։ Տեղական առևտրական կապիտալը շատ դանդաղ էր ներգրվում հողատիրության մեջ։ Ազնվականության մեջ էլ ծավալվում էր, ինչպես և գյուղացիության մեջ, խոշոր գերդաստանների ման-րացման պրոցեսը, նույնիսկ ավելի վաղ և ավելի արագ, քանի որ ազնվական հողատիրությունը կաշկանդված չէր գյուղերում պահպանվող համայնական հողատիրության պայմաններով և տան անդամներից յուրաքանչյուրը կարող էր դյուրությամբ առանձնացնել իրեն բաժին հասնող հողամասը նրանից

---

38 Зелинский С. П., նշված աշխ., էջ 106։

39 Որի մեջ մտնում էր այն ժամանակ նաև Մեղրու շրջանը։